ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՀՆԱՐ Է ԽՈՒՍԱՓԵԼ

Ադրբեջանի ազդեցիկ ծայրահեղական ուժերի կազմակերպած շրջափակումը բացասական շատ կողմերից բացի նաև ուղղակի հանցավոր կողմ ունի: Հայաստանի համար նախատեսված վագոնների կուտակումը, կայարաններում տիրող անկարգությունը սնուցիչ միջավայր են երկաթուղում ամեն կարգի հափշտակումների համար:

Ինչպիսի՞ն է իրադրությունն այժմ, ի՞նչ է արվում վտանգավոր հանցագործությունները կասեցնելու և բացահայտելու համար՝ այս մասին Արմենպրեսի թղթակից Ռ. ՔՅՈՒՖԱՐՅԱՆԻՆ պատմում է Հայաստանի տրանսպորտի դատախազ, արդարադատության ավագ խորհրդական Ժ. ԽԱՌԱՏՅԱՆԸ:

— Անկարգությունների մասին առաջին անհազանգումները ե՞րբ ստացվեցին դատախազությունում:

— *Լարվածությունը վաղուց գոյություն ուներ, բայց երբ բեռները ճանապարհին էին, ապա դրանց անվտանգությունը այնուամենայնիվ ինչ-որ կերպ երաշխավորվում էր Ադրբեջանից Հայաստան ուղարկելիս: Սակայն արդեն օգոստոսին մենք զգացինք ռեալ իրադրությունը. կայարաններում գոյացած խցանումները այնտեղ բերեցին ամեն տեսակ հանցավոր տարրերի: Գողության, կողոպուտների, շարամիտ խուլիգանության կորագիծը արագորեն վեր բարձրացավ, մանավանդ սեպտեմբերի վերջին:*

— Դուք չէի՞ք կարող արդյոք, կոնկրետ օրինակներ բերել:

— *Մամուլում բազմիցս բերվել են նման փաստեր: Ես կհիշատակեմ միայն այն փաստերը, որոնց հիման վրա քրեական գործեր են հարուցված:*

Սեպտեմբերի 22-ին Նորաշենի կայարանից Մասիս ժամանեց Ավստրիայում բեռնավորված մի վագոն: Կոմիսիոն բեռնաթափման ժամանակ պարզվեց, որ բեռներից պակասում են 21,9 հազար ռուբլու կանանց զուգագուլպաներ: Մի քանի օր հետո նույն Նորաշենի կայարանում կապարակնքված ուտեղ հասցված վագոնից, որը նախատեսված էր «Գարուն» միավորման համար, պակասում էր 24 հազար ռուբլու մորթեղենի հումք: Իսկ ինչքան մթերքներ են փչացել:

— Իսկ դատախազությունում կա՞ն արդյոք խաղաքացիների, ասենք, ուղևորների նկատմամբ ձեռնարկված ճակատագրական գործողությունների փաստեր:

— *Կան: Սեպտեմբերի 27-ին Շախտինսկի կայարանում մի խումբ ադրբեջանցիներ հարձակվել են Բաքու—Երևան գնացքի վրա: Գնացքում էին նաև Իրանից վերադարձող մի խումբ հայ տուրիստներ: Ծայրահեղականները, որոնք իրենց Ադրբեջանի ժողովրդական ճակատի անդամներ են հորջորջում, սպառնալով դանակներով, ավազակային հարձակում են գործել, հափշտակել իրեր, թույլ տալով առանձնապես չարամիտ խուլիգանություն: Տուրիստների հայտարարության համաձայն, հաջորդ իսկ օրը Հայաստանի ներքին գործերի տրանսպորտի վարչությունում քրեական գործ է հարուցվել, որը և ակտիվորեն հետաքննվում է: Հետաքննվում է նաև Արտաշատի կայարանում գնացքի մեջ քաղաքացի Ավանեսովի մահվան վերաբերյալ գործը: Պարզվել է, որ նրան գազանաբար ծեծել են Բաքվում, հենց իր տան բակում, փոխադրել Բաքվի հիվանդանոցներից մեկը, բայց հետո նրան անգիտակից վիճակում դուրս են գրել և հանձնել ինչ-որ մի մայորի Հայաստան տեղափոխելու համար: Ավանեսովը մահացել է գլխուղեղի ծանր վնասվածքից: Միայն սեպտեմբերին տրանսպորտում մեր քննչական մարմինները վարույթի են ընդունել 22 քրեական գործ:*

— Ձեռնարկվո՞ւմ են, արդյոք, միջոցներ բեռների պահպանվածությունը և գնացքների երթևեկության անվտանգությունն ապահովելու համար:

— *Այո, այժմ Հայաստանի ներքին գործերի տրանսպորտի վարչությունը վեց անգամ ավելացրել է գնացքներն ուղեկցող միլիցիայի կարգախմբերի թիվը: Մենք Ադրբեջանի և Կիրովաբադի տրանսպորտի դատախազների հասցեով բողոքագրեր ենք ուղարկել այն մասին, որ աղետյալ գոտում կատարվող շինարարության համար ստացվող ավտոտեխնիկայից և գյուղատնտեսական տեխնիկայից մասեր են պակասում, որ վնասվում են կապի կաբելներ և թույլ են տրվում այլ խախտումներ:*

Շրջափակումը խայտառակ երևույթ է, ազգամիջյան վեճերի լուծման մեթոդ չէ: Չէ որ դրանից տուժում է ոչ միայն Հայաստանը, այլև ամբողջ երկիրը: Վնասը հսկայական է: Ուստի և շրջափակումը վերացնելու, տրանսպորտի աշխատանքում հատուկ ռեժիմ սահմանելու պահանջները, որոնք առաջ քաշվեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում, գոհունակության զգացում են առաջացնում ոչ միայն մեր հանրապետության աշխատավորության մեջ: Ամբոխի պրովոկացիայի կազմակերպիչները պետք է քաղաքական և օրենքով նախատեսված պատասխանատվություն կրեն, որպես հատուցեն նյութական վնասը:

Հկկ Լենինյան շրջկոմը, Հայրիմմեքենա ա/մ կուսկոմիտեն խոր վշտով հայտնում են 1939 թ. ԽՄԿԿ անդամ, աշխատանքի վետերան, բանվոր, Լենինի, Պատվո նշան շքանշանների ասպետ ՀԱՄԱԶԱՍՊ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ մահը և ցավակցում հանգուցյալի հարազատներին:

Խմբագրի տեղակալ՝ Ն. Մ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ